որ և յօտարաց ի շղթայս կապանաւորուած և շատ նեղութիւններ քաշած է ի սէր իւր Եկեղեցւոյ և ժողովրդեան. ուստի նա և երախտագէտ ժողովուրդն՝ իշխանք և նախարարք բազում ոսկի և արծաթ մըսխելով կազատեն զնա օտարին ձեռքէն։

Նոյնպէս Յովհաննէս Կաթողիկոս Պատմաբան, որ աւելի դառն տառապանք կրեց, ինչպէս կարճառօտ պիտի տեսնուի յաջորդ թերթի մէջ։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՅ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՅՈՑ.

(Շարունակութիւն և վերջ).

Ի։—Երկրի բարձր լեռներն, ամենաբարձր տեղերն նոյնպէս ևս դառել էին առարկայ Հայաստանի նախնի բնակիչների երկրպագութեան։ Արարատ, (Taurus) Տորոս, Կովկաս, Մասիս, Ակէրկուր (Գրգուռ), Ալարագ ևլն. բազում հռչակաւոր լեռներ ընդունում էին չաստուածութեան պատիւ։ Ուխտաւորութեան սովորութիւնն՝ որ անում էին այդ տեղերում՝ թերևս աւելի հին է քան թէ այդ ազգի գոյութիւնն։ Ես կարծում եմ որ աշխարհի ոչ մի ժողովրդի մէջ՝ այս սովորութիւնն այսօր ևս այնքան ընդհանուր և այնքան յաճախ չէ քան Հայերի մօտ. բաց ի այն փոփոխութենէ՝ որ կարող են պատահել կարծեաց և երկրպագութեան առարկաների մէջ մարդկանց կողմանէ, դեռ շատ սովորութիւնք, շատ տեսակ ժողովրդական կրօնաւորական գործածութիւնք, պահվում են նոր անուանց և նոր ձևերի տակ։ Գրեթէ Հայաստանի բոլոր լեռների վերայ՝ ձեզ ցոյց կտան այցելութեան տեղեր, որոց մի քանին յայտնի սուրբերի անուանք են, այլք ներկայացնում են անծանօթ անուանք այս երկրի եկեղեցական պատմութեան մէջ. վերջապէս բազում այլք վերաբերում են միայն աննուիրական պատմութեան կամ թէ ժողովրդական աւանդութեան։ Յառաջ քան թէ տաճար շինելու միտքն ծագած լինէր, մարդիկ իւրեանց կրօնը հրապարակաբար պաշտելու համար ուրիշ ժամադրեալ տեղեր չունէին եթէ ոչ սարերն. բարձրանում էին մինչ ի մի վայր Արարատ, Ակէրկուր, և Տորոս և Մասիս լեռների վերայ, որ կոչում էին նա ևս Սեպուհ (այս ինքն Մասիսին)։ Արեգակը նոյնպէս պաշտուած էր արշալոյսի երևալուն պէս բոլոր լեռների վերայ, ինչպէս այսօր անում են Արևորդիները։ Երևի որ ճանապարհորդաց և ուխտաւորաց իջևաններ շինելու սովորութիւնն նախ և առաջ սկսուել է լեռների վերայ։ Այս հիւրընկալ տեղերն կոչուած էր Ալան կամ Ալանք. իւրաքանչիւր իջևանի մէջ գտնվում էր մի մասնաւոր չաստուածութիւն՝ որ կոչում էին Ալանպետ կամ Ալանապ, այս ինքն հիւրընկալող։ Այս տեղերումն այս լեռների վերայ էր, որ ուխտաւորք սովորաբար իջևանում էին հանգստութիւն և զովութիւն առնելու համար։ Քրիստոնէութիւնն հաստատելուց յետոյ՝ այս

տեղերն եղեն մենաստանք Հայ ծգնաւորաց համար, բայց միշտ կրելով Վանատուր անունն. սոքա նոյնպէս ընդունում են ուխտաւորները՝ որոնք գալիս են ան տեղ որոնել մի ապաստանարան։

ԻԱ։—Երբ որ սկսեցին բարձրացնել տաճարներ քաղաքներում և գիւղերում լեռների վերայ, ուխտաւորութեան սովորութիւնն սկսեց նուազել։ Միայն ամսոյ կամ տարւոյ այս ինչ օրում լինում էր՝ որ միաբանվում էին գնալու այն տեղ մեծ խմբով։ Տաճարներն, և մանաւանդ նորանց զարդարանքներն աւելի գըրաւում էին հասարակութեան ուխտաւորութիւնն, քարշում էին շատ մարդիք ստանկացնելով նոցա ջերմեռանդութիւնն արուեստական և հետաքրքրական առարկաներով։ Հայոց հեթանոսութեան հին դարերում, երկրի Պրմապետներն և քրմերն հասարակօրէն լեռների վերայ էին բնակվում։ Իջևանից կամ Վանքերի վարչութիւնն յատկապէս նորանց էր վերաբերում։ Այն տեղ կարգաւորում էին չաստուածների հանդէսն և նրանից ընծայում էին հասարակ զոհեր։

ԻԲ։—Հայոց կրօնը ընդունում էր ես, ինչպէս Արևելքի ուրիշ ժողովուրդներն, երջանիկ և տարաբախտ օրեր տարւոյ ամեն ամսի մէջ։ Իւրեանց նուիրական տարին բաղկացած էր 12 ամսից, իւրաքանչիւրն երեսուն և 5 աւելորդ օրերից՝ որ կոչում էին Աւելեաց։ Բայց իւրեանց քաղաքական տարին իւրաքանչիւր չորս տարին ընդունում էր մի վեցերրորդ օր աւելորդ։ Նուիրական տարին ցուցանում է ամսի երջանիկ և տարաբախտ օրեր մասնաւոր անուամբ, և այս կրկնուած էր տարւոյ բոլոր ամիսների երեսուն օրերի մէջ։ Այս տեսակ վերադիրքն են ընդհանրապէս չաստուածոց, լեռների և ուրիշ հասարակ առարկաների անուանքն։ Ի հետեւոյն կարող էք տեսնել մի ամսոյ օրերի կարգաւն։

1. Արեգ, արեգակ։

2. Հրանդ, հրեղէն գետին, Միհրի երկիր։

3. Արամ, արական տեղականութիւն, արական շրջան։

4. Մարգար, դաշտի կամ մարգագետնի մարդ։

5. Ահրանք, այս բառն նշանակում է ըստ գրականութեան չվերջացած, իսկ այլակերպեալ ասել է՝ զարհուրանք և երկիւղ։

6. Մազդեղ, չաստուածային։

7. Աստղիկ, այն չաստուածուհւոյ անունն է՝ որոյ համար խօսացինք։

8. Միհր, կրակի չաստուածն։

9. Ձոպաբեր, խառնակութիւն բերող։

10. Մուրց*), յաղթական կամ յաղթող։

11. Երեզկան, դաշտի կեանք։

12. Անի, Հայաստանի մի հին քաղաքի անունն է նա՝ և կարող է նշանակել անվերջ։

13. Պարխար, անուն լեռանն։

14. Վանատուր, այս հիւրընկալութեան չաստուածն է։

15. Արամազդ, անուն չաստուածութեան։

(*) Մուրց ասել է բուռն աւուծ։

16. Մանէ, լեռան անուն է, որոյ իմաստն է Բղխումն։

17. Assag, Ասագ, այս ինքն առանց վերջի։

18. Մասիս, Արարատ լեռան անունը։

19. Անահիտ, անուն չաստուածուհւոյ։

20. Արգաձ, լեռան անուն է՝ որ ասել է մարդկանց տեղ։

21. Գորգիս (Գրգուռ), այս մի լեռան անուն է՝ որին կոչում են նա և ռամիկներն Արիս։

22. Գորմի, կամ Գորդին լեռը։

23 Նոմակ, լեռան անուն, և նշանակում է մոր տեղ։

24. Լուսնիկ, լուսին կամ լուսնի ընկաւառակ։

25. Նրօն (Յրօն), սփռումն։

26. Նպաս, լեռան անուն, և նշանակում է գիտաւորութիւն կամ Նպասակ։

27. Վահագ, չաստուածութեան անուն։

28. Սէին, անուն լեռան։

29. Վարագ, լեռան անուն։

30. Գիշերավար, գիշերուայ առաջնորդող կամ ասող հովուի։

Տարուայ լրացուցիչ հինգ օրերն ունին նա և մասնաւոր յորջորջումն, որ մի և նոյն ժամանակին զանազան ասողերի անուանք են, որ իշխում են յաջորդաբար այդ հինգ օրերի ժամանակ։ Նոքա կոչվում են

Լոյծ։

Նղջերս։

Փարպանոս, լի աղդային փառաք։

Արբանոս, ապարօշ, խոյր։

Օրուայ քսանուչորս ժամերն հաւասարապէս յայտնի են մասնաւոր անուններով՝ որ միայն յարաբերութիւն ունին արեգակի ազդեցութեան գործոց գարունքի և աշունքի գիշերահաւասարութեան ժամանակին։ Նոքա դասակարգուած են բնական օրի սեւռղականութեան համեմատ, այս ինքն արեգակի միանգամ ելնելուցն ի միւս ելանելն, և կոչուած են։

Անուանք օրուայ ժամերի.

1. Այգ, արշալոյս։

2. Յայգ, օրուայ սկիզբն։

3. Զարգացեալ. այսպէս են կոչում, ինչու որ այդ ժամին արեգակը յաղթումն, և սկսում է իշխել բոլոր երկրի վերայ։

4. Ճառագայթեալ, լուսաւոր, այն ժամն է՝ որ երկիրը լուսաւորուած է ամենայն տեղ, և ուր արեգակի լոյսն սփռվում է բոլոր բնակութեան տեղերի վերայ։

5. Հաստատեալ, որ ասել է ճանաչաւոր. այն ժամն է՝ ուր արեգակի շողիւնն աւելի փայլուն է լինում, և ուր սկսում են լաւ նշմարել մթնաշաւնեարն՝ որ թափառում են երկնի մէջ։

6. Երկրորդ, նշանակում է կէսօրուայ ժամն, կամ այն ժամն՝ ուր արեգակի տաքութիւնը ընկնում է ուղիղ երկրի վերայ։

7. Հանդարտեալ, այն ժամն է, ուր արեգակն կայծով փայլում է։

8. Հրկոտ, բառ որ ասել է հոսումն կրակի, նշանակում է այն ժամը՝ որոյ մէջ արեգակն արձակում է իւր կրակն երկրի վերայ։

9. Հոր, փայլեալ այն ժամն է՝ որոյ մէջ արեգակի շողիւնն փայլում է ինչպէս կրակ։

10. Տիրացեալ, այսինքն այն ժամանակն է՝ որ արեգակի տաքութիւնը սկսում է սկարանալ։

11. **Ալաֆօփ**, մութլոյս այն ժամն է՝ որ արեգակը ուզում է մտնել ։

12. **Աչքօղ**. եթերական, գիշերուայ վերջալոյսի ժամն է։

Գիշերուայ ժամի անուանքն.

1 **Խառաբակ**, խաւար այն ժամն է՝ որ սկսում է գիշերուայ խաւարն։

2. **Աղջամուղջ**, մթութիւն կամ այն ժամանակն է՝ որ խաւարը սկսում է իշխել երկրի վերայ։

3. **Մթացեալ**, կամ ամենաթանձր խաւարի ժամ։

4. **Շաղաօփ**, գոլորշապատ կամ ցօղերի անկման ժամը։

5. **Գամաօփ**, սննդական կամ այն ժամն է՝ որոյ մէջ բոյսերն առնում են ուժ և աճում։

6. Bauagan,... բաւական, հիւթալից այն ժամն է՝ որ տունկերն ծանրաբեռնուած են բնութիւնից կամ թէ բնական հիւթից։

7. **Խափանցեալ**, այն ժամն է՝ որ ցօղն կամ թէ գիշերուայ գոլորշիքն թափանցում են գետնի վերայ։

8. **Կեղակ**, այս բառն նշանակում է կըպնող կամ թրջող, նշանակում է այն ժամն՝ ուր երկիրը ծանրաբեռնուած է պարարտութիւնով գիշերուայ ցօղի ներգործութեամբ։

9. **Լուսաչան**, այս առաւօտուայ առաջին վերջալոյսի ժամն է։

10 **Առաօփ**։

11. **Լուսափայլ**, այն ժամն է՝ որ արեգակի լոյսն սկսում է փայլել։

12. **Փայլածու**. այս բառն էնա և Մերքիւր մոլորակի անունն։

ԹԱՐԳՄԱՆ. ՕՐ. ՍՕՖԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

ԸՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉԱԿԻՐՔ.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՑԻՈՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ։

ԳԼ. Ա.

Յաղագս Ասպետութեան.

Երկոտասաներորդ դարու նկարագրութիւնը ընծայում է մեզ մի եզական խառնուրդ հոգեւորական զգացողութեանց եւ զինուորական եռանդեան, որ մղեց Եւրոպական ազինքը դէպ ի յանդուգն ձեռնարկութիւն, մոռացոյց նոցա աշխարհի բոլոր բերկրութիւնքը, ու ներշնչեց ի նոսա հոգի անվտանգ խիզախել մահը։ Այդ դարու հիանալի երեւոյթը Ասպետութիւնն կամ թէ այն միաբանութիւնն էր, որ ունէր իւր նպատակ տկարութեան եւ եկեղեցւոյ պաշտպանութիւնն. սոյն սքանչելի միաբանութիւնս, որ ծգեց Երկոտասաներորդ դարու վերայ մի փայլուն ճառագայթ, գրեթէ կը հարկադրէ զմեզ ներողամիտ գտանուիլ դէպ այդ դարուայ բարբարոսութիւնը։ Միջին դարում քրիստոնէական ողորմածութիւնը, հոգւոյ վեհութիւնը, բնութեան ազնուութիւնը, բարեկամութիւնը, սէրը եւ գութը չունեցան երբէք հանգոյն այդ դարու կատարեալ կերպարանք։ Մի ճշմարիտ ասպետի պարտաւորութիւնքն սոքա էին,—պաշտպանել ըզկանայս եւ զմանկտիս, որպէս եւ լքեալ կղերը, պատժել անարդարութիւնն ու ճնշել հարստահարութիւնը, զոհել բարեկամաց իւր կեանքը, հեղուլ իւր արիւնը ի փառս Աստուծոյ, ի կիր արկանել բոլոր առաքինութիւնքը առանց որ եւ իցէ վարձատրութիւն պահանջելոյ, ու չնայելով տոհմականութեան՝ կուրօրէն հնազանդիլ գլխաւորի հրամանաց եւ ի գլուխ ամենեցուն՝ յարգել պատիւը։

Այս միաբանութեան ծագումն սքօղուած է ընդ մթին վարագուրիւ։ Ասպետական կարգը ծնունդ առաւ հարաւային Գաղղիայում, Գերմանական ազանց Բուրգոնեան ամենահանդարտ բնակչաց գաւառաց մէջ, ընդ որս մասնակից եղեն Ֆրանկները ի խաչակրութեան. սակայն ասպետութիւնն յԵւրոպա տարածօղք եղեն խաչակիրք։ Ոմանք ի հնագիտակաց կարծիս ունին՝